



Holy Trinity Armenian Church
14 Woodlawn Avenue West Toronto 7, Ontario

Jirayr Tashjian Pastor

Փետրուար 15, 1967.

Գերաշնորհ
Տ. Թորգոմ Ս. Եկեղեցւոյ Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք, Ն. Ե.

Սրբազան Հայր,
Ի պատասխան Ձեր Շրջաբերական թիւ 123-ի, այսու կու գանք
հաղորդելու թէ Ս. Եկեղեցւոյ Տարեկան ծխական ժողովը տեղի ունեցաւ
Կիրակի Փետրուար 12, 1967 յետ միջօրէ ժամը 3.30ին, 154 Տրատու
անդամներէն 56 անդամներու ներկայութեան:

Թէև ժողովը մեծամասնութիւն չէր կազմեր, եւ սակայն մեր
թեմի Կանոնադրութեան 18-րդ յօդուածին երկրորդ պարբերութեան
համաձայն, ժողովը համաձայն գտնուեցաւ, որ ներկաներու երկու երրորդ-
դի դրական քուէները բաւարար նկատուին որոշումներ առնելու համար:

Տարեկան ծխական ժողովը քննարկելէ ետք ծխական խորհուրդի
եւ յարակից մարմիններու նիւթա-բարոյական տեղեկատուութիւնները,
անցաւ ծխական խորհուրդի դադարեալ եւ մէկ հրաժարեալ անդամներու
ընտրութեան: Ընտրողական Յանձնաժողովի անդամներու տեղեկագրին
համաձայն հինգ թեկնածուներու անուններ կարելի եղաւ ներկայացնել
հինգ ընտրելիներու համար, փոխան երկպատիկ ցանկին:

Ընտրողական Յանձնաժողովի անդամները յայտարարեցին ժողովին
թէ, հակառակ իրենց թափած բոլոր ճիգերուն, միայն ներկայացուած
հինգ անդամներու թեկնածութիւնը կրցած էին ապահովել:

Ժողովս համոզուած ըլլալով որ ներկայ ժողովին յետագումը
ոչ մէկ արդիւնք պիտի ունենար թեկնածուներուն թիւը բարձրացնելու
տասնի, մեծամասնութեամբ որոշում տուաւ ներկայացուած թեկնածուներու
թիւին, պայմանաւ որ սոյն որոշումը վաւերացուի Ձերդ Սրբազնութեան
կողմէ, ըստ Կանոնադրութեան տրամադրութեան:

Ներկայացուած թեկնածուներու ցանկը հետեւեալն է.

- Տիարք Հայկ Սէլեան
- Կարօ Տէիրմէնճեան
- Պետրոս Զիլինկիրեան
- Արթօ Կիւլեան
- Բենիամին Ամբակումեան

որոնք արդէն կը վայելեն հայ համայնքիս սէրն ու վստահութիւնը, եւ
կասկած չունինք որ անոնք իրենց լաւագոյնը պիտի ընեն յօգուտ և ի
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ հայ համայնքիս:

Արդ սպասելով Ձեր շուտափոյթ վաւերացման եւ օրհնութեան
Մնամ ի համբոյր Ձեր Ս. Աջոյն

Խոնարհ որդիդ
Ս. Դրայր Թաշճեան
Հ. Ժիրայր Թաշճեան Հովիւ
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ

